

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 15/5

1 հուլիսի 2016թ.

Քննարկվեց Ա/Ձ Խաչատուր Տոնոյանի 08.06.2016թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 31.05.2016թ-ի թիվ 320591/01 որոշման դեմ:

Ա/Ձ Խաչատուր Տոնոյանի գանգատում բերված փաստարկները.

31.05.2016 թվականին կայացվել է ՎԻՎ որոշում (թիվ 320591/01), համաձայն որի օրենքով սահմանված ժամկետում չի ներկայացվել 2016 թվականի 1-ին եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկը:

Ա/Ձ Խաչատուր Տոնոյանը տեղեկացնում է, որ հանդիսանում է բացառապես արտոնագրային վճար վճարող, չունի և չի ունեցել շրջանառության հարկով հարկվող օբյեկտ, և շրջանառության հարկի հայտարարություն ներկայացվել է, որպեսզի 2016թ. ընթացքում այլ գործունեություն սկսելու համար հնարավորություն ընձեռնվի շրջանառության հարկով հարկվելու:

Հետևաբար հաշվի առնելով վերը շարադրվածը 2016թ. 1-ին եռամսյակի ընթացքում շրջանառության հարկով հարկվող գործունեություն չիրականացնելու պայմաններում շրջանառության հարկի հաշվարկ ներկայացնելու պարտավորություն չի կրում:

30.05.2016թ-ին ի պատասխան ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության 1-ին բաժնի ծանուցման, գրությամբ տեղեկացվել է վերը շարադրված փաստերը:

Ելնելով վերոգրյալից, Ա/Ձ Խաչատուր Տոնոյանը խնդրում է բեկանել թիվ 320591/01 որոշումը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետը, քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 2421 գործը և ուսումնասիրելով վարչական իրավախախտման վերաբերյալ 20.05.2016թ. թիվ 2421 արձանագրությունը պարզել է, որ Ա/Ձ Խաչատուր Տոնոյանը «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված ժամկետում չի ներկայացրել 2016թ-ի 1-ին եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկը:

Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի կողմից 31.05.2016թ-ին ընդունվել է վարչական

իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 320591/01 որոշումը (այսուհետ նաև Որոշում), որով Ա/Ձ Խաչատուր Տոնոյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամի չափով:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Ա/Ձ Խաչատուր Տոնոյանը 2016թ-ի 1-ին եռամսյակի ընթացքում շրջանառության հարկով հարկվող գործունեություն չի իրականացրել, այլ բացառապես զբաղվել է արտոնագրային վճարով հարկվող գործունեությամբ:

Հանձնաժողովի համոզմամբ քննարկվող դեպքում անհրաժեշտ է ղեկավարվել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2008 թ-ի սեպտեմբերի 30-ի թիվ 9 պաշտոնական պարզաբանման դրույթներով, որի 4-րդ կետի համաձայն՝ եթե հարկ վճարողը (կազմակերպության, անհատ ձեռնարկատեր, նոտար) փաստացի չի իրականացնում գործունեություն (այդ թվում նաև՝ չի հանդիսանում գործատու կամ հարկային գործակալ), ապա՝ այդ ժամանակահատվածում ներառվող՝ հարկատեսակների համար օրենքով սահմանված լրիվ հաշվետու ժամանակաշրջանների համար հարկ վճարողն իր հաշվառման վայրի հարկային տեսչություն հաշվետվություններ (այդ թվում՝ «գրոյական») չի ներկայացնում:

Վերոգրյալից հետևում է, որ Ա/Ձ Խաչատուր Տոնոյանը 2016թ-ի 1-ին եռամսյակի ընթացքում շրջանառության հարկով հարկվող գործունեություն չիրականացնելու պայմաններում շրջանառության հարկի հաշվարկ ներկայացնելու պարտականություն չի կրել:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Բեկանել ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 31.05.2016թ-ի թիվ 320591/01 որոշումը, իսկ գործը՝ կարգել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ